ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

02 նոյեմբերի 2012 թվական N 154-Ա

ք.Հրազդան

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԸՆԴՈՒՆՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի փետրվարի 3-ի N 108-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանին հատկացված գումարների հաշվին Հրազդանի ներհամայնքային փողոցների ասֆալտապատման աշխատանքների վերջնական ընդունման և հետագա շահագործման նպատակով Հրազդան համայնքին հանձնելու համար՝ **կարգադրում եմ.**

1. Ստեղծել շինարարական աշխատանքների ընդունող և շահագործման հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

1) **Վ.Բակլաչյան** հանձնաժողովի նախագահ - Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի տեղակալ,

2) **Ս.Հակոբյան** անդամ – Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ,

3) **Ս.Սաֆարյան** անդամ – Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ,

4) **Ռ.Սողոյան** անդամ – տեխնիկական հսկողությունն իրականացնող «Արցախճան ինստիտուտ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ),

5) **Է.Մարտիրոսյան** անդամ – հեղինակային հսկողություն իրականացնող «Տրանսնախագիծ ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ),

6) **Է.Բեզոյան** անդամ – օբյեկտի կապալառու կազմակերպության՝ «Ճանապարհ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության ներկայացուցիչ (համաձայնությամբ),

7) **Ա.Դանիելյան** անդամ – շահագործման ընդունող Հրազդան համայնքի ներկայացուցիչ (համաձայնությամբ):

2. Հանձնաժողովին՝ տեղերում ուսումնասիրել կատարված աշխատանքների համապատասխանությունը նախագծա-նախահաշվային փաստաթղթերին ու շինարարական նորմերին և համապատասխան ակտը ներկայացնել տասնօրյա ժամկետում:

3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ.ՇԱՀԳԱԼԴՅԱՆ